Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Լ. Սարգսյան

«31» օգոստոս 2023թ.

«ՋԵՐՄՈՒԿԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023- 2024 ՈՒՍՏԱՐՎԱ

ՍԴԱԿ՝ Մանան Գևորգյան

Կանոնադրություն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) կազմակերպում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցում դասղեկների հետ.

2) մասնակցում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը.

3) տնօրենի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալի ղեկավարությամբ կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

4) սովորողների մեջ ձևավորում է պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակում մարդասիրություն և հայրենասիրություն.

5) ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար.

6) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

7) մասնակցում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը.

8) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

9) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը.

10) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

11) համագործակցում է ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

2. Հանրակրթական ուումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները,

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,

գ. աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, մինչբժշկական օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

2) տվյալ պաշտոնն զբաղեցնողի կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները ներկայացված են սույն բաժնի 1-ին մասում:

3. Որակավորման պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ:

Դաստիարակությունը դժվար գործ է,և նրա պայմանների բարելավումը յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականություններից մեկն է,որովհետև չկա ավելի կարևոր բան,քան ինքն իրեն և մերձավորներին կրթելը:

Սոկրատ

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանզի կրթության գերնպատակը անձի կայացումն է: Միևնույն ժամանակ դաստիարակությունը պետության պարտավորությունն է իր քաղաքացիների առջև՝ ապահովելու անձի լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը:

Դաստիարակչական աշխատանքները նախագծելիս հաշվի է առնվել,որ դաստիարակությունը և ուսուցումը գտնվում են սերտ կապի մեջ և դրանք դիտարկվում են որպես միասնական գործընթաց :Այստեղ ներառված են հետևյալ աշխատանքները .

1. Աշխատանք մանկավարժական խորհրդի հետ
2. Աշխատանք դասղեկների հետ
3. Աշխատանք գրադարանավարի հետ
4. Աշխատանք ծնողների հետ
5. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

2023-2024 ուստարվա ուսումնանադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

Հ/Հ	Ոլորտ/գործողություն/	Ժամկետ	Կատարող անձ	Ակնկալվող արդյունք
	Կազմակերպչական աշխատանքներ			
1	Ա.Դպրոցը նախապատրաստել նոր ուսումնական տարվան ,դպրոցի ձևավորում: Բ.Թարմացնել պատի թերթերը ,ստենդներն ու անկյունները	Օգոստոսի վերջին շաբաթ	ՍԴԱԿ փոխ-տնօրեն դասղեկ-ներ	Ստեղծել աշխատանքային հարմարավետ միջավայր
2	Գիտելիքի օր,1-ին դասարանցիների հանդիսավոր մուտքը դպրոց	Սեպտեմբեր	Տնօրինու-թյուն , փոխ-տնօրեն դասվար-դասղեկ-ներ՝ ՍԴԱԿ	Օրը տոն դարձնել
3	Գովասանգրերի հանդիսավոր հանձման արարողություն	Սեպտեմբեր	Տնօրինու-թյուն ,դասվար-դասղեկ-ներ, ՍԴԱԿ	Խրախուսել և արժևորել գիտելիքի դերը
	Աշխատանք դասվար- դասղեկների հետ			

	Դասվար-դասղեկների խորհրդակցություն	Սեպտեմբեր	փոխ-տնօրեն, ՍԴԱԿ դասղեկ-ներ	Աշխատանքի կանոնակարգված պլանավորում
5	Համագործակցել դասղեկների հետ դասարանական և համադպրոցական միջոցառումները իրականացնելու համար	Տարվա ընթացքում	ՍԴԱԿ ,դասղեկ-ներ	
6	Հետևել աշակերտների ուսուցման ,գիտելիքների յուրացման նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման ընթացքին	Տարվա ընթացքում	ՍԴԱԿ, դասղեկ-ներ	
	Աշխատանք աշակերտների հետ			
7	Դասարանական խորհուրդների ձևավորում՝ ըստ դպրոցի ԱԽ կանոնադրության	Սեպտեմբեր	ՍԴԱԿ	Աջակցել դպրոցական ինքնավարությանը
8	Աշակերտական ընդհանուր ժողով	Սեպտեմբեր	ՍԴԱԿ	
9	ԱԽ-ի ձևավորում ըստ դպրոցի ԱԽ կանոնադրության ԱԽ նախագահի ընտրություն	Սեպտեմբեր	փոխ-տնօրեն, ՍԴԱԿ	
10	Աշխատանք տանել աշակերտների կարգապահության հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ ,դասղեկ-ներ	

11	Մասնակցել ծնողազուրկ ,սոցիալապես անապահով և ԿԱՊԿՈՒ երեխաների դաստիարակության և ուսուցման գործընթացին	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ, դասղեկ-ներ, Մասնա գիտակա ն թիմ	Նպաստել համընդհանուր ներառական համակարգի ներդրման գործընթացի իրականացմանը և օգնության կարիք ունեցող երեխաների աջակցելուն
	Աշխատանք ծնողների հետ			
12	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ,կազմավորել դասարանական ծնողխորհուրդ	Սեպտեմբեր	տնօրեն, ՍԴԱԿ	Ապահովել հաստատության և սովորողի սերտ կապն ու համագործակցությունը
13	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական ,արտադպրոցական աշխատանքներին	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ, դասղեկ-ներ	
14	Ուսումնասիրել աշակերտ –ուսուցիչ-ծնող փոխհարաբերու-թյունները,հնարավորիս օգնել միասնական և համերաշխ աշխատանք կազմակերպելուն	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ ,դասղեկ-ներ	
15	Աշխատանք գրադարանավարի հետ			
16	Համատեղել միջոցառումների պլանավորումը, դասագրքերի բաշխում ,վերանորոգում	Սեպտեմբեր -Մայիս	Գրադարա նավար, ՍԴԱԿ ,դասվար-դասղեկ-ներ	Համգործակցել ,առանձնակի սեր արթնացնել ընթերցանության հանդեպ

	Վերահսկել աշակերտների կապը գրադարանի հետ	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, ՍԴԱԿ ,դասվար-դասղեկ-ներ	
18	Աջակցել ընթերցանության և ասմունքի մրցույթների կազմակերպմանը	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, ՍԴԱԿ ,դասվար-դասղեկ-ներ	
19	Գրողների հոբելյանական տարեթվերին նվիրված միջոցառումների համապատեղ կազմակերպում	Ուստարվա ընթացքում	Գրադարանավար, ՍԴԱԿ	
	Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն			
20	Համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարուկության գործընթացը Ա.անցկացնել հայրենասիրական դասեր Բ.Ռազմահայրենասիրական միջոցառումներ,կլոր սեղան ,սեմինարներ ,դաս-միջոցառումներ Գ.Անցկացնել քաղպաշտպանության պարապմունքներ ըստ նախատեսված պլանի	Ուստարվա ընթացքում Սեպտեմբեր ,հունվար, մայիս	ԴԱԿ ,զինղեկ, դասղեկ	Հայրենիքը սիրող, նրա արժանապատվության համար մարտնչող անձի ձևավորում
	Հոգևոր և գեղագիտական դաստիարակություն			
21	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ, Դասղեկ-	Մշակույթ կրող ստեղծագործական միտք և

	դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ		ներ	ճաշակ ունեցող անձի ձևավորում
22	Ա՛/Այց մշակութային օջախներ Բ/Ձեռքի աշխատանքների ,նկարների ցուցահանդես Դ/ Ամանորին նվիրված դասասենյակի ձևավորում	Ուստարվա ընթացքում Դեկտեմբեր	ՍԴԱԿ ,դասղեկ-ներ ,տեխնո-լոգիայի ուսուցիչ, Դասվար-ներ	
23	<<Հայոց եկեղեցու տոները և ազգային սովորույթները >> Ազգային ավանդույթներին ,տոներին ու ծիսակատարություններին ծանոթացնելու նպատակով կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ	Հունվար, փետրվար ,ապրիլ	ՍԴԱԿ, Դասղեկ-ներ,դաս-վարներ,հ. եկ.պատմ. ուսուցիչ	Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնության նկատմամբ ,կարևորել եկեղեցու հայապահպան դերը
24	Այցելություններ պատամաճարտարապետական վայրեր ,դաս-էքսկուրսիաներ	Ուստարվա ընթացքում	Դասղեկ-ներ ՍԴԱԿ,	
	Ֆիզիկական դաստիարակություն			
25	Մասնակցություն համադպրոցական,համապետական սպորտային միջոցառումներին	Ուստարվա ընթացքում	Ֆիզ. Ուսուցիչ ՍԴԱԿ,	Առողջ պրելակերպի և դիմացկունության ձևավորում
26	Մասնակցություն շախմատի օլիմպիադաներին	Ուստարվա ընթացքում	Շախ-մատի ուսուցիչ ՍԴԱԿ,	

2023-2024 ուստարվա միջոցառումների պլան

	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Պատ.անձ	Ակնկալվող արդյունքներ
1	<<Ողջու՛յն,հարգատ դպրոց>>միջոցառում նվիրված գիտելիքի և դպրության օրվան	Սեպտեմ-բեր	ՍԴԱԿ, դասղեկ-ներ,դասվար-ներ	Օրը տոն դարձնել
2	Դասը վարում է ոստիկանը<<Օրինապահ հետիոտն >>:	Սեպտեմ-բեր	Անչափահաս-ների գծով տեսուչ ՍԴԱԿ	Համագործակցություն պետական և հաս.կառույցների հետ
3	<<Անկախությունը պարգև է ,որ տրվում է այն կերտողներին >> ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումներ ա . մասնակցել համայնքի կազմակերպած միջոցառմանը բ . <<Անկախությունը մենք ենք …>>խորագրով կավճանկարչության մրցույթ	Սեպտեմ-բեր	ՍԴԱԿ ,դասղեկներ, ,զինղեկ,	Արժևորել անկախության գինը
	գ .ակտիվ մասնակցություն անկախության օրվան նվիրված դպրոցական և համադպրոցական սպորտային միջոցառումներին դ. Սեր զինվածների			

4	Թարգմանչաց տոն <<Շնորհավո՛ր տոնդ ,սիրելի ուսուցիչ>> Ուսուցչի օրվան նվիրված միջոցառումներ ա/շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում բ/ԱԽ-ի կողմից անակնկալ՝ նվիրված դպրության ջատագովներին	Հոկտեմբեր	ՍԴԱԿ,դասղեկ-ներ, ԱԽ	Սերունդներ կրթելու և հասարակության արժանապատիվ անդամ ձևավորելու առաքելությունը բարձր գնահատող անձի ձևավորում
6	Այցելություն մշակույթի օջախներ՝ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տոմսերով	Ուստարվա ընթացքում	Դասվար-դասղեկներ	Մշակույթ կրող սերնդի դաստիարակութ-յուն
7	Հովհաննես Թումանյան -155			
8	Մասնակցել շաբաթօրյակներին ,մաքրել դպրոցի տարածքը, դասասենյակները	Ուստարվա ընթացքում	ՍԴԱԿ ,դասղեկներ	Խթանել աշխատանքային դաստիարակու-թյանը
9	<<Աշխատանքը մարդու ինքնադրսևորման հնպրավորություն >>դասղեկ.ժամ.	Հոկտեմբեր-նոյեմբեր	Դասղեկներ	
10	Գրադարանավարի օր <<Գիրքը հավատարիմ ընկեր >>զրույց դասղեկական ժամ.	Հոկտեմբեր	ՍԴԱԿ՝գրադարա -նավար ,դասղեկներ	
11	<<Ա >>տառի շնորհանդես	Հոկտեմբեր-նոյեմբեր	ՍԴԱԿ,դասվար-ներ	

12	<<Աշնան գույներ>>միջոցառումներ նվիրված աշնանը <<Աշնանային վալս >>նկարների ցուցահանդես	Նոյեմբեր	Դասվարներ ՍԴԱԿ ,կերպ.ուս.	Ստողծագործա-կան միտք և ճաշակ ունեցող անձի ձևավորում:Շնորհ ալի աշակերտների բացահայտում, խրախուսում:
13	Կենսբազմազանության պահպանման միջազգային օրվան ընդառաջ կազմակերպել զրույց <<Բնությունը կենսատու աղբյուր է>>թեմայով	Նոյեմբեր-դեկտեմբեր	Կենսաբ.ուս .դասղեկներ	Շրջակա միջավայրի պահպանամանը միտված անձի ձևավորում
14	Հաշմանդամության միջ.օր <<Հաշմանդամությունը արգելք չէ>>դասղեկի ժամ	Դեկտեմբեր	Դասղեկներ, Հոգեբան ԴԱԿ	
15	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր Անցկացնել զրույցներ երկչաշարժի ծանր հետևանքների մասին լուսաբանել առաջավոր երկրների փորձը	Դեկտեմբեր	Դասղեկներ ,զինղեկ	
16	<<Զմեռային հեքիաթ>> Տարրական օղակի միջոցառում Ամանորին նվիրված միջոցառումների կազմակերպում 5-6-րդ դաս Դիմակահադես 7-9-րդ դաս	Դեկտեմբեր	ՍԴԱԿ ,դասղեկներ, դասվարներ	Տոնական տրամադրության ստեղծում ,ճաշակի ձևավորում

17	Պատի թերթերի ,մրցույթների կազմակերպում ,շնորհավորական բացիկների ձևավորում	Դեկտեմբեր	ՍԴԱԿ ,դասվար-դասղեկներ	
18	Նշել Հայոց բանակի ստեղծման օրը <<Հայոց բանակ >> միջոցառում	Հունվար	ՍԴԱԿ ,դասղեկներ	Կարևորել Հայոց բանակի դերն ու նշանակությունը
19	Հարգանքի տուրք Հայոց բանակի քաջերին ,մոմավառություն	Հունվար	ՍԴԱԿ ,զինղեկ դասղեկներ	
20	Գրքի նվիրատվության օր Մայրենիի օր <<Նվիրի՛ր գիրք ,նվիրի՛ր լույս >>խորագրով միջոցառում	Փետրվար	դասղեկներ Գրադարանավար	Խթանել ընթերցանությանը ,կապը գրքի հետ : Խոսենք մաքուր հայերենով
21	Մասնակցություն տարբեր առարկաներից կազմակերպված մրցույթների, օլիմպիադաների <<Մեղու>>հայերենի մրցույթ <<Կենգուրու>>մաթեմատի-կական միջազգային մրցույթ	Ուստարվա ընթացքում Հոկտեմբեր Մարտ	Մասնախմբեր, ՍԴԱԿ	Լրացուցիչ գիտելիքների ձեռքբերում

22	Գարուն, զարթոնք … Մայրության և գեղեցկության միամսյակին նվիրված միջոցառումներ	Մարտ-ապրիլ	ՍԴԱԿ ,դասղեկներ	Տոնական տրամադրության ստեղծում տանը և դպրոցում
23	Հիշատակի օր՝ <<Մեծ եղեռն>> Այցելություն հուշահամալիր	Ապրիլ	ՍԴԱԿ,դասղեկ-ներ ,ԱԽ	<<Հիշում ենք և պահաջում կարգախոսի պահպանում>>
24	<<Սովորություններ,որ վտանգում են մեր	Ապրիլ	Դասղեկներ	
	առողջությունը>>դաս.ժամ.			
25	Մայիսյան հաղթանակներ՝ <<Մենք դեռ կանք ու կմնանք ……>> հայրենասիրական դաս	Մայիս	ՍԴԱԿ,զինղեկ, դասղեկներ	Հաղթանակների ուրախությունը, պարտություն-ներից դասեր քաղելը
26	<<Գրագետ եմ ես արդեն>>այբբենարանի հանդեսներ	Մայիս	Դասվարներ	Տարեվերջյան արդյունքների ցուցադրում
27	Վեջին դաս	Մայիս	Դասղեկներ	Տոնական օր՝հրաժեշտ հիմնական դպրոցին
28	Տարեվերջյան էքսկուրսիաներ	Մայիս-հունիս	Դասվար-դասղեկներ	Ճանաչենք և սիրենք մեր հայրենիքը

Կատարված աշխատանքներ	Ժամանակացույց	Պատասխանատու	Անցկաց. վայր

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ՝

Մանան Գևորգյան